

Զ.

# ԵՐԳԵՐ.

## ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ.\*)

Սուրմալուայ Կուլար զիւղի բարբառով 1).

Վաղիկ ես քո ծառէն եմ,  
Վիճկի միջի թառէն եմ.  
Քամին վէր քցեց,  
Վարանս մօլլեր եմ:  
Այ օրան—օրան ծաղիկ՝  
Կարմիր ու տորան ծաղիկ՝

Տարին մէ խետ ես գալմ,  
Գամ քեղի գովամ ծաղիկ:  
Մաղիկ, ծաղկավանայ եմ.  
Ասրլ էրևանայ եմ,  
Տարին մէ խետ ես գալմ:  
Թագա նուպարիսանայ ես:

\* ) Վիճակի երգերը չորս կարգի կը բաժանուին. որպէս նաեւ ամեն երգեր իրենց բաժանմունքներն ունեն. Առաջինն է «Ծաղկաբաղը». սր հարսներ ու աղջկունք գոյնզգոյն ծաղիկները գտնելու համար մարգագետիններու մէջ կերգեն ու կորոնեն. Երկրորդ՝ «Վիճակի կամ փարչի գովը» փունջերը. որ փարչի մէջ զետեղած են. մի յարմար վայր կը դնեն. շրջապատեն, պարեն ու կերգեն. Երրորդ՝ աղջկանց խումբը փարչով միասին ամեն տուն կայցելեն. իւրաքանչիւր տան յաջողութեան համար յարմար երգեր կասեն ու նուէր կը հաւաքեն. Չորրորդ՝ «Ծաղկահան», կամ «Վիճակահան», որ փարչի բոլորը կը ցրջապատեն. պարեն ու կերգեն. Ավասու որ տեղ տեղ խառնուած են իրար. իսկ կան կղզիացած (քիչ) տեղեր. ամեն երգ իր յարմար տեղը կերգեն. Եթէ յատուկ ուշադրութիւն չգարձուի. այն եւս պիտի աղճատուի կամ անհետ կորսուի:

1) Գրի առնուած է 1894 Թուին:

Անձրեւ էկաւ շաղալէն՝  
 Ուռի ծառը դողալէն՝  
 Հորէս էկաւ իմ աղբէր,  
 Ալ ձին տակին խաղալէն։  
 Ագույ վերև ամպեր ա,  
 Իմ աղբէր ուր ձին թամբեր ա,  
 Գացեր մեյտան կրուեր ա,  
 Անձվեր էկեր թըչեր ա,  
 Արև առեր չորցեր ա,  
 Քոնց քահօւր գարդ բացուեր ա,  
 Մաղիկ ասեմ ու զատեմ,  
 Լցեմ տոպրակ ու խցեմ,  
 Առնեմ ընկնեմ գեղէ գեղ.  
 Բալքի մէ խտա ճարհմա  
 Կողբայ բերդը բիեր ա,  
 Խարս տակին քներ ա,  
 Զէն տուի, ձէնս չառաւ,  
 Մէկեր քարիս առւեր ա,  
 Կողբայ քարեր դօւայ ա,  
 Միջի մարդը բօւայ ա,  
 Մաշիկ դրէք, դուս ընեմ,  
 Ինձ էլ չասեն բօւայ ա:  
 Կողբայ քարեր դօւայ ա,  
 Սարերին օււայ կասեն.  
 Քօները բանաւայա:  
 Իմ նանը մածուն ա մէրեր,  
 Փէսիկին կանչեր բերեր,  
 Անտէր մնայ ան կատուն,  
 Փէսիկին փայն ա կերեր,  
 Խնձոր ունիմ կծած ա,  
 Չորս բոլոր արծթած ա,  
 Խարս ուզեց, չառւի  
 Անուշ աղբօր տուած ա,  
 Աղբէր ունիմ անուշ ա,  
 Խալած արծթէ օււա,  
 Մառի գլխին կայնած ա,  
 Ես ասի քանլան դուծ ա,  
 Օխշարն արեր եմ դէկը,  
 Զոկեր եմ ալագեօղը  
 Լայլուխ օղորկայ նիսեմ,

Թափ տու բեանեիւիդ քոզը:  
 Այ աղա, յէրով նի արի,  
 Օխչարի բէրովնի արի,  
 Խէրս քե աղջիկ չի տայ,  
 Վերին կալերովն արի:  
 Այ աղա. արի խօսա,  
 Բկիդ բաղդատին խաս ա,  
 Խէրս քե աղջիկ չի տայ,  
 Աղբօրս արադ ասա:  
 Բօգ ձին ինչ անըմ նալը,  
 Խօրօտն ինչ անմ խալը,  
 Ես սիրեր եմ, ես կառնեմ,  
 Ինչ անեմ դալմադալը:  
 Պաղէի բաղչէն ուռի ծառ,  
 Եղայ, արի, ընծի առ,  
 Պալապանչու քարկը տուր.  
 Խռովեր եմ խարցս առ,  
 Զայիւին միջի ծիւ խոտը՝  
 Պալոյի անուշ խոտը՝  
 Կոտորի դիւսմնի օտը:  
 Զը թողեց գէր իմ մօտը:  
 Երեան ձորի մէջ ա,  
 Սառն աղբուր մէջն ա,  
 Ալէքի թուկս բեանուլը  
 Դրամ ըլապկի մէջն ա:  
 Ցովէկի դուպան բանձր ա,  
 Եղայ, Պալոն քաղցը ա,  
 Շաշոյ Գէւորին ապրի,  
 Մին օր չասիր փալսցրայ:  
 Առաւոտ բարի լուսուն,  
 Քո պինը խարիր իցցուն  
 Խամրի դրի վեր հուրսուն:  
 Գացի արտեր, բռնի լոր,  
 Աղջիկ անհաւ կայլի ձոր.  
 Կը մանէր կարմիր խնձոր,  
 Առաւոտ թափեր փոշին,  
 Իմ դօս զանեմ քո դօժին,  
 Խնչակս նալուէն մըջ լծին:  
 Առաւոտ թուտիր մուլք.  
 Թալեց սարիկէն, կախնց պիւխ.

Աչքեր բալայ ընքեր թուխ  
Աժէր Մուշն ու Բուլանուխ  
Նաղիկ ասեմ ու ամազեմ,  
Ծեմ ծաղկեմ ու կանաչեմ.  
Մեյտան բացէք, դուս ընեմ,  
Թագա եւարին ճանաչեմ  
Օլոր մոլոր ճամիներ,  
Մշակոտոր ազպներ,  
Կանանչ կենան աղջկներ,  
Զէկան տարան վիճկըներ:  
Բաղջի միջի վարդ ա,  
Բաղջի շունը սարդ ա,  
Աղջի, դու կամաց խօսա,  
Տալտա տեղ կլի մարդ ա:  
Քարափի գլուխ աղ ա,  
Բոլորը բարփա բաղ ա,  
Աղջի, մուրաէտ կորի  
Հալա սիրածդ սալ ա:  
Սևահողի քամին ա,  
Սիւտակ ծովի գեամին ա,  
Որին սիրես, բաց թողես,  
Էն էլ ընդրա համին ա:  
Աստղներ ցերեկ ցերեկ,  
Կիւմրուց նուպար բերէք,  
Լայլուխս տամ մաւառւլուխ,  
Ետրից խապար բերէք:  
Մանիքը մատիս լախ ա,  
Տուերեմ ետրիս, պախայ,  
Իրեք օր իրեք գիշեր՝  
Իմ նան ընձի դոնախ ա,  
Կապուտ քուռակ խէծեր եմ,  
Կետուկին մօտացեր եմ,  
Կետուկ, ինձ մէ ճանփայ տուր,  
Իմ նանին կարոտցեր եմ  
Մանիքը մատովս չի,  
Սիրածս սրտովս չի,  
Սապիպ, քո բալէն մեռնի,  
Ես ընդու լայեղին չի:  
Ես գիշեր լուսնակ գիշեր,  
Կեռ ընքեր, կարմիր թշեր,

Աստուած պախայ քու աղքեր,  
Տաստուր տու, գամ էս գիշեր,  
Չայի ափին սազ պիտէր,  
Միջին օրեկի, դազ պիտէր,  
Ինչ անեմ կետէ կիւտէ,  
Իմ եարը տապազ պիտէր:  
Չայի ափը մանար ուռ,  
Սիրած բռնելը շատ մռաւա,  
Աշխար ասաց—տղէն ծուռ,  
Իմ սրտի մէջ նուր ու դուր:  
Կայներէս, մի կռանայ,  
Մեր դռնեն մի հեռանայ,  
Եար, Աստուածդ կը սիրես,  
Սիրեր ես մի մօռանայ  
Բաղջի բոլոր դամիս ա,  
Բաղջէն լիքը եմիրս ա,  
Նանի ջան, մեղ մի դնէ,  
Սրտի սիրածն անուշ ա:  
Տամբուլի կոթը քերեմ,  
Կայնի, քե գինի բերեմ,  
Չեռս վղովդ քցեմ,  
Գնացած խելքդ բերեմ:  
Տամբուլի կոթը թթի,  
Օխտը կով ունեմ կթի,  
Ո՛վ որ իմ սիրած սիրայ,  
Խօցին դժոխքին փթի:  
Էս սարը բանձը սար ա,  
Տակը զննլած քար ա,  
Ես քե թաքուն սիրեցի,  
Էս ով խանեց աօքարայ,  
Սարն ընցի էն եանը,  
Ինչ անեմ դիւնի մալը,  
Տղէն տես, աղջկը տու,  
Զէկնեմ թէ չի նալը:  
Աղջի, ինչ լաւ մազ ունես,  
Սոլիստի փարվազ ունես,  
Տղէն աղջիկ աեսնելուս  
Ինչ շատ եօխին նազ ունես,  
Ինչ լաւ ա մեր բամպակը,  
Կով ա կանափի տակը,

Եկայ մօտովդ անց կեցայ,  
Չասիր, արի մեր բակը:  
Ազրէրս հանտին տեսայ,  
Զըւրի բանտին տեսա,  
Ասի, խալը խարցնեմ,  
Քեախուլը դան դան տեսայ,  
Պղտի աղջի, զալմ ես,  
Մազերդ սղալմ ես,  
Քեղարդայ դագեպին գաս,  
Միւը օսկորից խանմ ես,  
Պղտի աղջի, սեաւոր,  
Խալիսի դռներին սովոր,  
Գնա, նանիդ խարցրայ,  
Խնձի շանայ մեղաւոր,  
Պղտի աղջկայ մէրը,  
Խօսքն ա տուե խէրը,  
Օխտը տարի սիրութեն՝  
Չտուեց քեամիր մէրը:  
Ես սարի սինձն ինչ ա,  
Կաթնով բրինձն ինչ ա,  
Ես սիրեր իմ, ես կառնեմ,

Ես խլիի խօսքն ինչ ա:  
Այ տղայ, ալին տղա,  
Քեաքիւլդ դալին տղա,  
Ես քե որտեղ սիրեցի,  
Խէրանցս կալին տղա:  
Տղա, գնա կալը տես,  
Պաղ աղըրի սալը տես,  
Խէրս քե աղջիկ չտայ,  
Գնայ, գլխիդ ճարը տես,  
Ծառի սկին կար կանեմ,  
Են խաւերին քար կանեմ.  
Իմ սիրածա ընձի սուէք,  
Ծոռւթունս բարկ կանեմ:  
Սիրեր եմ սէրն էրէսին,  
Ըուենան թէրն էրէսին.  
Ով որ իմ սիրածն սիրայ,  
Աստուծու կրակն էրէսին:  
Աստղներ կամար - կամար.  
Մէջքս կայ օսկի քեամար.  
Եցցուն օր պաս եմ պախեր.  
Քու զանիլ զանի խամար:

\* \*

#### Գ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ՀԱԻԱՔԱՆՈՒՆԵՐՀՆ

Դարսայ նախիշեւան գիւղի բարբառով \*)

Մաղիկ քաղի մաղերով,  
Զան զիւլում զան, զան.  
Վեր եմ դրէ շաղերով.  
Զան ծաղիկ զան, զան.  
Համբարձուայ գիշերը,  
Զան գիւլում զան, զան.  
Պագեմ խալու թշերը:  
Զան ծաղիկ զան, զան.  
Զուրն առայ յէլայ դարը,  
Գտայ իմ Ֆիտան եարը.

Դէն տարէք Ֆիտան եարը,  
Զը քաշեմ ան ու զարը:  
Հաղել ես կարմիր դեյշն.  
Խօսքմ տուիր քու ըերնէն.  
Սարերուն մարալ ըլնիս,  
Զես պղծնիլ իմ ձեռնէն:  
Մէ տուն ունիմ զանանա,  
Լարդուն կուտամ դիմանա,  
Զեռքիդ ջուրը տուր խմեմ,  
Բալքիմ սիրտս հովանայ:

\*) Ասել է Գրիգոր Գալոյեան Դարս. Նախիշեւան գիւղացի. Սա ասում են դռների վրայ, երբ ծաղիկները բաժանում են եւ նուէր են ստանում.

Ղարանիլս դեղին է,  
Խմ եարը ձեր գեղին է.  
Մէ դաստա վարդ եմ քաղէ,  
(Հրէս) Հորէ եարիս ձեռին է:  
Գիշերը դուս էլայ,  
Լուսնեակն անուշ կը ցոլայ.  
Կը ցոլայ Ալմա սարին,  
Լաւ բարե անուշ եարին:  
Կայնել ես բոխա բոխա,  
Չափմանիդ թեր կախ ա.  
Շէկ տղայ, սիրուն աղջիկ,  
Կպել ևն իրար եախայ:  
Կայնել ես վաճքի հողին,  
Քամին տայ դոօիդ մովին.  
Էրնէկ քու ծոց քնողին,  
Դաստա մազեր բռնողին:  
Կանանչ արտի իեանարը,  
Ո՞վ է տեսէ իմ եարը,  
Ցորեկ տուին իրզարը,  
Գիշեր բոչեցին սարը,  
Զօւիս գութան սար կը բանի,  
Շէկ աղջիկ հաց կը տանի.  
Մէկ կերթայ մէկ կը կայնի,  
Ախլ ու իման կը տանի:  
Էսմանը մէ բոչ անցաւ,  
Քոչը տուաւ մէջ անցաւ,  
Սիրոս մէ կը ակ ընկաւ,  
Ոչ էրեցաւ. ոչ անցաւ:  
Կայնել ես պատի տակը,  
Գրել ես մանուտ ակը.  
Եարիս դրկած քալիկը,  
Գրել ես ֆասիդ տակը.  
Արխալուդդ կարել եմ,  
Դուզ կոճակ շարել եմ,  
Շան տղայ, կորի գնա,  
Քեզեն լաւը ճարել եմ:  
Զուրն էկաւ շողալէն,

Ուռի եափրադ դողալէն.  
Տիա եարս գալմ է,  
Ալ ձին տակին խաղալէն:  
Կայնել ենք յիրուր գիմաց,  
Խալուղով կէնենք իմաց.  
Խայլուղը տար տու տէրը,  
Տեսնես արեուդ թէրը:  
Աղջիկ, ինչ է դիլակդ,  
Օղուն կոճակ բիլակդ,  
Մէ բանայ բայազ կեօգսդ,  
Օիրտս քցիր կը ակը:  
Խնձոր ունիմ խածած է,  
Զորս բոլորն արծաթած է.  
Աղբէրս ուկեց չտուի,  
Քեալաւ եարիս դրկած է:  
Էս ճամբէն օլոր կերթար.  
Խլքաշին օլոր կերթար.  
Բաղիս չկայ բաղմանչի,  
Զորուել էր, մօլոր կէրթար:  
Էս աներ, կամար աներ,  
Միջին էր օսկէ ոներ.  
Օսկէ սներ վարդ պիտէր,  
Սրտով սիրած եար պիտէր.

\* \*

(Մանի ըսելու էկայ. \*)  
Ղայմախ ուտելու էկայ.  
Մարամըս դարմաղը չէր  
Եարիս տենալու էկայ:  
Մէր բաղջի ճերմակ դուօը,  
Խմ եարի գոված թուշը.  
Ես իրունէն վարդը ուզի.  
Ինքն ընձի տուաւ փուշը:  
Ցղա անունդ Յովհաննէս,  
Բաղչէքուն օկյան կանես.  
Պարի մէջ խաղալուց,  
Խի աչքով ունքով կանես:

4) Ասել է Զոյրա Գրիգորեան Ղարսա Նախիջեւան գիւղացի. Սա-ասում են վիճակը հանելու ժամանակ առանց «ջան գիւլումի».

Ժամի տկի մարմար քար,  
Նս չեմ առնի դարիբ եար.  
Թէ որ առնեմ դաշիբ եար,  
Օսկին զարկեմ սարէ սար:  
Տղա, փափախդ դուման;  
Վերման կորար բեզիւման.  
Հօրս դուռը սալած է,  
Զին այարած, կայնած է:  
Չափուկ էրս, ընձի տար,  
Դուսմներս կայնած է,  
Կարմիր քարը տաշած է,  
Բոյս դալամ քաշած է,  
Խնչ էնեմ օր քաշած է,  
Սիրտս հալած, մաշած է,  
Պիջի պարը բոլըրաւ,  
Նարս մէջը մոլըրաւ:  
Հարանքի ճամբէն քարտա,  
Սերգոն դոքնչէն կարոտ,  
Քնայ, մէ էրազ տեսայ,  
Աև հերկը ցանած տեսայ:  
Այ ադէք—ադէքը,  
Կողբայ լորի գեադէքը,  
Նստել ևն դիւնները,  
Կանչում ևն լաւ դայդէքը.

\*  
\*\*

Մաղեր ունեմ ծիրանի; 1)  
Քամին թել թել կը տանի,  
Սիրականս սարին, ձարին,  
Իմ քունս մնց կը տանի  
Աղջի անունդ Շուշան,  
Սիւտակ բոխաղ թուխ նշան.  
Արի, էրթանք սուրբ նշան,  
Վալա մատնիս քեղ նշան,  
Մեր բաղին կայ լորի,  
Մազերդ ետ օլորի.  
Ցըմէն միտքդ ընկնելուս,  
Սիրադ փորիդ մոլըրի  
Սարէն յէլաւ էրկու մուխ,  
Մինը հանդաւ, մինը ծուխ.  
Սիրականս կորցրի,  
Քիթը կալնած, հարսը թուխ:  
Հանդէն դաս, գեղը մտնես,  
Իմ գցած տեղը մտնես.  
Ինձնէն այրի եար բռնես,  
Բէմուրատ հողը մտնես:  
Աղջի, անունդ Մահի,  
Ճակատդ բոլոր շահի.  
Թուշդ դէս արա, պագեմ,  
Աստուած քու աղբէր պահի.

### Աւանայ Աւանգ գիւղի բարբառավ \*

Օստեր ես վեր տախտին,  
Թռեր ես վեր բախտին.  
Խարսն էխան վիճայն ի բարին 2).  
Մէր կերաւ խաւրծիւ,  
Տղէն իբե օսկի ծիլ:  
Մէր կերաւ թանխուս

Տղէն իբե բամբուս:  
Մէր կերաւ կետպի տակ,  
Տղէն իբե պատի տակ:  
Խին չոմբար,  
Ճաթ փողկետար.  
Խիւընդցար,  
Կ'ը չի խատար:

1) Ասել է Մարան Մկրտչեան Նարսա Նախիջեւան գիւղացի.

2) Երգած եւ պատմած է Եղիսաբէթ Կափաննեանց.

2) Ամեն տան վերջը պիտի կրկնուի.

Ոստան ձիկ ոսկի կուտայ,  
Բանձրաշէն արեն ի վրայ.  
Իմ խացն Աստծուց կուգեայ,  
Սեղան հայր Աբրհամայ,  
Լցուաւ կարմիր խնձորով  
Կարմիր խնձոր կլոր—մլոր,  
Եկաւ լցուաւ միջաց բոլոր,  
Նոռան գինի խետ քեւ խմեմ,  
Սարխոսնամ քեօ ծոց քնեմ:  
Ղութնի բարձ, Շամայ դոչակ,  
Վրէն պառկի տաճկի մշակ:  
Երզումայ բարվան էկաւ,  
Քարվանի մէջ մէյ ձիկ կէր,  
Վեր էն ձիուն սնդուկ մի կէր,  
Սնդուկի մէջ աղջիկ մը կէր.  
Աղջկան անուն Դաշին փաշաւ:  
Պարի լուսին,  
Քեւ մեռնիմ, քեօ էրեսին:

Աղբէր, աղբէր, ես քեւ շուն,  
Խունկն ու հինէն ապրօւմ,  
Ինչ ես, բարձէ քու իշուն.  
Տանենք, տանք բզէզին,  
Թզէզ ձիկ աղբէր մը տուր,  
Արտամէդ իմ նստելա տեղ,  
Ծովն ձիկ գինի պիտի,  
Կեամին ձի կթիսայ պիտի,  
Կեամիջին իմ դպուդ բաժին:  
Սուրբ Վարդան էնապապ կերեր  
եմ,

Վեր ծովուն անուշ քներ եմ:  
Երթանք էրերին,  
Ոչխար վեր բերին,  
Կթենք թուի մաքին,  
Լցենք սուրախին:

\* \*

## Արծեկի բարբառավ.

Վիճակ նստե վըր պատին,  
Ազապ աղէկնիր վըր լակին:  
Վիճակ դնած ա վըր իշուն,  
Թումպնի փողեր ապրօւմ,  
Ազապ տղէկներ վիճկի շուն:  
Վիճակ նստե վիլ բերան,  
Շեռն էլեր մածնի մէրան,

Քրդեր էկան, տարան, կերան,  
Առաւոտոն թունտիր վառ.  
Վիճակ կը մանէր զօգանի գառ,  
Օր կ'օրբեկնաս, արին, զիս առ,  
Սուրաւ թունտիր մուխ,  
Փուշին կապէ, թողէ պուխ,  
Զեռ բռնեց, տարաւ Բուլանուխ:

Գեացինք Բուլանուխ, ինչ անուշ գեղ էր,  
Էրկուս մէկ շապիկ՝ փողպատ նեղ էր,  
Ասին, Ալաշկերտ խինդ խաղար տուն էր.  
Գեացինք, տեսանք մէ խաւքու բուն էր:  
Խաւքուկ վըր ծովուն, անուն Արուսը էր,  
Անուն Արօր էր, աստաւոր կանաչ տերևաւոր.  
Կարմիր գլոխ՝ սրտիկ սեաւոր:  
Առու տեսայ խընց գետմ էր,  
Քեարվան էկաւ իմ եար խետն էր.  
Իշկեցի, իմ եար խընց յըմէն յետն էր.

Որի եար. արի, խռով մի կէնայ,  
Դիւնի մալ քեզի չի մնայ:  
Իմ ուստից յէմալ ուժ էնամ,  
Քէյլան խեծնիմ, էլլիմ աւզուօ էնիմ:  
Մանտրիկ թփեր էրկանոց,  
Ազապ տղէկներ անեն դարտ ու խոց:  
Գեղի բոլոր չաւուրմայ,  
Ղարդատ օխչար խաւուրմայ,  
Վիճակն ուտայ, խլաւնայ:  
Աշխարք ասին, վիճակ ծուռ էր,  
Մէջ իմ սրտին լալ ու դուր էր.  
Պէյպանն էր ալանայ, թեներ մավի,  
Գնա ժամ, արի, քեօ մեղքեր քեաւի,  
Գրկեմ, պառկեմ քե, տեղ չի ցաւի:  
Նախըագնէն ուռի ծառ:  
Խնձոր կը թալեմ, արի տար,  
Խնձորի կէս կծուկ էր,  
Չորս գլուխ արծթուկ էր:

Անձրեն էկաւ բէդ բէդ.  
Պոյիդ մեռնեմ Զէրեդ:  
Թղթի միջի գիրն եմ,  
Սարգիս աղի քուրն եմ,  
Զաղջի դռներ զուր կուզայ,  
Աղջիկ աղին դուր կուզայ:  
Զաղջի դռներ կանանչ էր,  
Աղջիկ աղին ճանանչ էր:

Անձրեն էկաւ կալ կալայ,  
Բաժիդ մեռնիմ Մարգարայ,  
Էրկու դուռուօ, տաս փարայ:  
Օձ մի տեսանք ճլպտուն,  
Փախաւ մտաւ Սալւու տուն,  
Սանամ նստէ նախօս կէնայ,  
Ծամեր էտև գեազ կէնայ:

### Կարծկանայ Նանըկանց գիւղի բարբառով.

Պինտ պախէցէք վիճկներ, 1)  
Զգան կատրեն ազապներ.  
Խարս, խան վիճակն ի բարի:  
Վիճկի ճլոր վըր պատին,  
Ազապ լաճեր վըր լակին:  
Խարս, խան վիճակն ի բարին:  
Խնձան սարեր կան բող,  
Դառնան քո տիրօջն դող.  
Խարս, խան վիճակն բարին:

Քեօ մեր կէրեր խաւրծիլ.  
Քե բերէր ոսկեծիլ.  
Խարս. խան վիճակն բարին:  
Խնչքան դիւնիէն կայ մալ,  
Դառնայ քեօ տիրօջ մալ ու բամալ:  
Խարս, խան վիճակն ի բարին:  
Քեօ մէր կերէր ձուածեղ,  
Քե բերէր կոր անծեղ:  
Խարս, խան վիճակն ի բարին:

1) Դրի է առած Ա. Հ.

## Մոկաց Սպիտակ գիւղի բարբառով \*).

Քեօ մէր կիրեր էղեղէն,  
Քե պիրեր խըսդէն.  
Խարս, խան վիճանն ի բարի 1).  
Քեօ մէր կիրեր խաւրծիլ,  
Քե պիրեր ոսկեծիլ:  
Քեօ մէր կիրեր ձուածեղ,  
Քե պիրեր կօր անծեղ:  
Քեօ մէր կիրեր էղէջ,

Քե պիրեր ըբաէջ,  
Քեօ մէր կիրեր պատըտակ,  
Քե պիրեր պատի տակ:  
Քեօ մէր կիրեր ...  
Քե պիրեր ... պոպուան:  
Քեօ մէր կիրեր մանանայ,  
Քե պիրեր սատանայ:

\* \*

## Նիւսնենց գիւղի բարբառով \*\*).

Վիճայնի հոլա, հոլա,  
Աղապ տղէն ի ֆեօլայ.  
Վիճայ նստէ շեռպէտո,  
Շեռ իլե տկի տաշեղ,  
Աղապ լաճու պոկի տեղ:  
Զան վիճայ զան—զան.  
Դաստայ գիւլիւմ զան զան 1).  
Էսա վիճայն ինչ կուզէր.  
Խորերով ցորեն կուզէր:  
Էսա վիճայն ինչ կուզէր,  
Բեակերով օխչար կուզէր:  
Վիճակի անուն Ալթուն ի,  
Զեպեր ելին կթուն ի.

Վիճակի անուն Վարդիկի ի,  
Ուսով օչխար որդիկ ի:  
Վիճայ նստե վեր պատին,  
Աղապ լաճեր վեր լակին:  
Վիճայ նստե վեր իշուն,  
Թումպնի փողերն ի նիւսուն:  
Խամբարձում եկաւ,  
Խլերենք սարեր, ծաղիկ կը քաղենք,  
Պիրենք, փառչի պէրան կը զանենք:  
Ալնախ կը ժողուենք.  
Դիւգիւր կը պիրենք.  
Փառջի գըլօխ կը կապենք:

\* \*

## Բագրեւանդայ Վանքի գիւղի բարբառով 2).

Ջամեանց սարեր ամպեր ա, | Զան ծաղիկ զան զան 3):  
Աղբերս ձին թամբեր ա, | Գնացեր մեյտան՝ խաղցեր ա,

\* ) Գրի առած է Ա. Հ. 1) Ամեն երկտողից յետոյ կրկնել:  
\*\*) Գրի է առած Ա. Հ. երգած է Վանի Թիմարայ Կիւսնենց գիւղացի  
Խոռոր Սարգսեան. 4) Ամեն երկտողից յետոյ կրկնել:  
2) Ասած է Յակոր Համազասպեան:  
5) Ամեն տնից յետոյ կրկնելու է:

Անձրև էկեր թռչեր ա,  
Զան վիճակ զան:  
Քներ ա քրտներ ա.  
Վարդն յէրեսին փոռուեր ա.  
Զան, զան ծաղիկ զան:  
Մեր բաւօն ջրով ա,  
Մեր ուշ թրով ա,  
Ամէնք էրթան ուս խանի դուռ,  
Խոսք ոսկի ջրով ա:  
Անձրև էկաւ շաղալէն,  
Այլանի պատ դողալէն.  
Դէն գացէք, աղբէրս էկաւ,  
Բոզ ձին տակ խաղալէն:  
Վիճակ, էկան քեզ կը տանին,  
Տնէն տանիս քեզ կը հանին.  
Ամէն աղջիկ մէ ցաւ է,  
Քեզ կը խարէն, բանէ հանէն:  
Մառ մի ունիմ կեռաս ա,  
Գիշեր քնա էրազ ա,  
Լուսուն յէրայ մուրազ ա.  
Քուրուըակք, Սատուած խանչէք,  
Աղբէրս հասնի, մուրազ ա:  
Մառ մի ունիմ Հնտա քաղաք,  
Ճուղ տանէր քաղքէ քաղաք,  
Ամէն ճուղին քառսուն ճրադ,  
Մէջ նստեր սինամահաւք:  
Մառի տակ արօստ ա,  
Քուր աղբօր կարօտ ա:  
Վիճակ դըի վըր իշուն,  
Վիճակ փողերը նխօսւն.  
Վիճակ դըի վըր փին,  
Պրժաւ, ընկաւ մըջ տլին:  
Դետը կուգայ թխխալէն,

Շամեան դրած շողջողալէն,  
Խարսիկ, խառնախան վիճակն ի  
բարին:  
Կոխերիս փշին, Խլերիս թախտա-  
փշին.  
Աշխար կը ցանկայ քու խօրոտ  
բաժին:  
Ճրադ շէնքին կը վառի.  
Գութան ի դաշտ կը բանի,  
Չար կամի դուռն կը պատուի:  
Նսաէր ես յէգին. վիլակ կէնես,  
Մէկ Աստծուց դիլակ կէնես,  
Օսկի օրօրոց կօրօրես,  
Մարգրտէ ծածկոց ի վրէն:  
Մանի ըսեմ ու շարեմ,  
Լցեմ տոպրակ ու կարեմ.  
Խրկեմ, էրթայ քաղկէ քաղաք,  
Սրտիս սիրածը ճարեմ:  
Զոջ տուն ջուխտակ գերան,  
Խորստ պառկաւ գէշի ծոցան.  
Հէյ վախ ու հազար բերան:  
Ժողուած ա մանուկ ու կտրիճ,  
Կանէր քար ու խիջ.  
Կը հանէր աղբուրն ի սարից:  
Հագեր ես կանաչ,  
Կերթաս սուրբ խաչ,  
Աստուած քեզի տայ ջուխտ լաճ:  
Իմ մէր կերեր թթու թան,  
Ընձի բերեր վթվթան:  
Իմ մէր կերեր ճուածեղ,  
Ինձի բերեր բոռ անձեղ:  
Իմ մեր կերեր խաւրծիլ,  
Ինձի բերեր ոսկի ծիլ:

**Շիրակայ Դամոլիչայ գիւղի բարբառով \*)**

Սաղկի անուն Անթառան,  
Գեատէք էկան, յետ դառան.  
Զան ծաղիկ, զան զան:  
Զաղջի դուռը չաւորմայ,  
Աև շունը դաւուրմայ.  
Կանչէք թող գայ ուչսին,  
Գեատէք բերայ վըր մսին:  
Զան ծաղիկ, զան զան:  
Գութանը մանի —մանի,  
Շէկ աղջիկ հաց կը տանի,  
Մէկ կը քելայ, մէկ կայնի.  
Զան ծաղիկ, զան զան:  
Օխտը դուռը բամամ ա,  
Մոցդ մտնիմ համամ ա.  
Մոցումդ բոստան դրի.  
Մծերդ ինձի շամամ ա,  
Զան ծաղիկ, զան զան:  
Այ արփին, արփին, արփին,  
Յէրկէն առուն քար ափին,  
Քուր կը մեռներ էն աղբօր,  
Համ գլաւին, համ դարբին:

\*  
\* \*

**Ղրմզլու գիւղի բարբառով 1)**

Սաղիկ եմ քաղէ, էս ա,  
Զանիդ մեռնեմ, զան փեսա:  
Մաղիկ քաղի մաղերով,

(1) Ասել է Ալաշկերտցի Մաքօ Պետրոսեան. որ փոքր ժամանակ ապրել է Տաշիչայ գիւղու.

4) Ղրմզլու գիւղի աղջիկները Համբարձման տօնից մի շաբաթ առաջ սկսում են ծաղիկ քաղեր. Թեւ Թեւի տուած եւ երգել. «Մաղկի գովքը» տեւում է մինչեւ համբարձման—հինգարթի. այդ օրը վերջանում է վիճակի փարփի ու ծաղիկի գովեստը. իսկ հետեւեալ կիրակին վիճակ են հանում. այդ օրը աղջիկները չեն երգում: այլ մեծ կանայք Թուրքերէն

Վեր դրեցի շաղերով.  
 Հըէն իմ ազբէրն էկաւ,  
 Բոզ ձին տակը խաղալով,  
 Ծաղիկ, ծաղկելանայ եմ,  
 Ասլ յԵրևանայ եմ.  
 Տարին մէ խետ ես գալմ.  
 Թազա նուպարխանայ եմ:  
 Մեր հանդերը ջրով ա,  
 Մաշին թրով ա.  
 Ամէն մենլիս մտնելու,  
 Խօսքերն օսկի ջրով ա:  
 Ծաղկի անուն Անթառան,  
 Տղէքն էկան, յետ դառան:  
 Ծաղկիս անուն Աղասի,  
 Ճակտէ ճակտ ապասի:  
 Չորս ընկանի ծափ ունեմ,  
 Մէջը լիքը լափ ունեմ:  
 Այ հէքեարի, հէքեարի,  
 Մխսար մխսար շաքարի:  
 Թռնն էկաւ շաղերով,  
 Վարդ քաղեցի մաղերով:  
 Սև ա չոպանի շունը՝  
 Կը տանի եարիս քունը:  
 Թազա եօնջէք ջրեցի,  
 Դանկները սրեցի.  
 Առաւօտ գիշերհանայ  
 Վիճկիս մատաղ կորեցի:  
 Էնտու կաքաւ ան ծեփրակեխ,  
 Աղբէր, էրթանք միատեղ:  
 Էս սարը ծաղիկ չկայ,  
 Արի, էրթանք գիւլի բաղ:

\*

\* \*

«Մէնի» են ասում: Ամեն մինը իր վիճակը միշտ հանելիս՝ մի տուն մանի  
 է ասում առանց եղանակի: Այս ամառ նոյն գիւղը լինելով ուզեցի գրի  
 առնելը սակայն կանայք չափազանց գրաղուած լինելով չկարողացայ «մէ-  
 նիւները հաւաքելը, այլ աղջիկներից ծաղիկի երգերը միայն գրի առի-  
 Ա. Հ.

Մեր նայարը բաղչալ կայ,  
Քաղջի մէջը ու ենան կայ.  
Ու ենանը քաղող պիտի,  
Ծոցումը պահող պիտի  
Անձրես դաշխատ ա,  
Կարմիր վարդը լալիս ա,  
Ճանքախալ արէք, անց կէնայ,  
Կարօտ եարս գալիս ա:  
Կանաչ տեփուր մեյտան ա,  
Դնացէք, տեսէք եարս գան ա,  
Նոր բւնած բէղերը,  
Ոսկի թելի նման ա:  
Գեանջա քամին գալիս ա,  
Թիկնա մէջը տալիս ա,  
Աղջիկ, վե կաց, դուռը բաց,  
Գլխիդ տէրը գալիս ա:  
Նախորաջորա խնկի ծառ,  
Խնձոր թալեմ, արի տար,  
Ուրբաթ, շաբաթ քե մօնլաք,  
Լուս կիրակի արի տար:  
Արեգակը ամոի տակը,  
Ես եմ քո գնդի փակը,  
Ես քեզի նրտե սիրեցի,  
Մեխակի քոլի տտկը:  
Արեգակը կամար, կամար,  
Մէջըումդ ոսկի քամար,

Ես մեռնեմ, աչք ունքիդ խամար.  
Յիցցուն օր պաս եմ պահէ,  
Քո ազիդ ջանիդ խամար,  
Լոյսնակը անդին գիշեր,  
Սև աչքը, կարմիր թշեր,  
Եմ եարը ընձի տուէք,  
Զեր խերը բարի գշեր:  
Զու եմ դրէ բաւէն, խաշեմ,  
Էլնեմ կտուրը, քե աշեմ,  
Տեսնեմ եարս գալիս ա,  
Չոքեմ, չամմեքը քաշեմ:

\* \*

Ես աղջիկ եմ ալ կուզեմ.  
Ալս ծալպածալ կուզեմ.  
Ես էն տունը հարս պիտի,  
Ոսկի սարէ սար կուզեմ:  
Սարիցն էլաւ էրկու ծուխ,  
Մէկը հանկաւ, մէկէ մուխ,  
Էրկու զեօզալ եմ սիրէ,  
Մէկը շէկ ա, մէկը թուխ:  
Լոյսնակը ցերեկ, ցերեկ,  
Գեամբայ խապար բերէք,  
Ալլուխս տամ մուտուլուխ,  
Եարիցս նուպար բերէք:

\* \*

## Թաւրիզի բարբառով \*)

- |                          |                              |
|--------------------------|------------------------------|
| Համբարձում գեալաջախ տըր, | Հոմբարձումը գալու է,         |
| Զան գիւղում, զան զան 1). | Զան վարդս, զան, զան,         |
| Սուրթանի սալանախ տըր.    | Սեղանը պարզելու է.           |
| Նոբեարի եօլի հիւպեր,     | Սպասաւորի ճանապարհին կսպասէ, |
| Օզի տա զեալանախ տըր:     | Ինքն ևս գալու է:             |
| Համբարձում արլու գեալը,  | Համբարձում, ձիւաւը կդայ,     |
| Արլու վար, արլու գեալը,  | Զիւաւը կայ, ձիւաւը կդայ:     |

\*) Գրի է առել Արուսեակ Հայկունի. ասել Համասփիւռ. Նաւաս արագեան. 4) Ամեն տողի վերջը կրկնելու է սոյն տողը.

Խնդի գեալան Համբարձում, — Այժմ եկող Համբարձումը,  
 Բաեի դովլարի գեալան: — Գլուխը բաղդաւոր կդայ:  
 Ես մի կանաչ խիար եմ,  
 Քո ջանին էխտիար եմ,  
 Կերթամ, կերթամ, յետ կը դամ,  
 Ես մէ բաեալու եար եմ:  
 Զաղաշխ դուռը փոս ա,  
 Քար կը թալեմ, կը խօսայ,  
 Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,  
 Ուկէ դալամով քաշած ա:  
 Դուռը դաւան վերէն ա,  
 Հեյվէն նռան վերէն ա.  
 Հորէն էկաւ իմ եարս,  
 Ղալխան ձիէն վէրէն ա:  
 Ճրադ դրամ լուսացու,  
 Կորմիր խառնէն քիսացու,  
 Ես քո մօրը հարսնացու,  
 Դու իմ մօրը փեսացու:  
 Մառի տակը խով կանի,  
 Թելերդ քամին տանի,  
 Փեօքիր, փեօքիր ուստինայ, — Սփուոց սփուոցի վրայ,  
 Փեօքիր դիւզիւմ ուստինայ. — Սփուոց ծնկիս վրայ.  
 Օքրդա ենաղազ եազիպ, — Նստած գիր կը գրէ,  
 Քրիստոսն եօխնայ: — — Քրիստոսին սիրուն վրայ:

